

**«Սենքի տեղային տաքացուցիչների էկոնախագծմանը ներկայացվող
պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի
2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝**

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 թվականի ապրիլի 28-ի 2015/1188 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
(ԵՄ) (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով էներգասպառող արտադրանքի էկոնախագծմանը ներկայացվող պահանջները սահմանող շրջանակ ստեղծող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգը¹ և մասնավորապես՝ դրա 15(1) հոդվածը,

2009/125/ԵՀ հրահանգի 18-րդ հոդվածում նշված Խորհրդատվական ֆորումում քննարկումներից հետո,

քանի որ՝

- 1) 2009/125/ԵՀ հրահանգով Հանձնաժողովից պահանջվում է սահմանել այնպիսի էներգասպառող արտադրանքի էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ, որն ունի իրացման և ապրանքաշրջանառության մեծ ծավալներ, նշանակալից ազդեցություն է գործում շրջակա միջավայրի վրա և մեծ ներուժ ունի նախագծման միջոցով շրջակա միջավայրի վրա ավելի քիչ ազդեցություն ունենալու առումով՝ չառաջացնելով չափազանց մեծ ծախսեր.
- 2) 2009/125/ԵՀ հրահանգի 16(2) հոդվածով նախատեսվում է, որ 19(3) հոդվածում նշված ընթացակարգի և 15(2) հոդվածով սահմանված չափորոշիչների համաձայն, ինչպես նաև

¹ ՊՏ L 285, 31.10.2009թ., էջ 10:

Խորհրդատվական ֆորումում քննարկումներ անցկացնելուց հետո Հանձնաժողովը պետք է անհրաժեշտության դեպքում կիրարկումն ապահովող միջոցառումներ ներկայացնի ջերմոցային գազերի արտանետումների ծախսարդյունավետ կրճատման մեծ ներուժ ունեցող այն արտադրանքի համար, ինչպիսիք են սենքի տեղային տաքացուցիչները.

- 3) Հանձնաժողովն իրականացրել է նախապատրաստական ուսումնասիրություն՝ բնակելի եւ առետրային շենքերում սովորաբար ջեռուցման նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների մասով տեխնիկական, բնապահպանական եւ տնտեսական հայեցակետերը վերլուծելու համար: Ուսումնասիրությունը կատարվել է Միության եւ երրորդ երկրների շահառուների եւ շահագրգիռ կողմերի հետ համատեղ, եւ արդյունքները հասանելի են դարձվել հանրությանը.
- 4) սենքի տեղային տաքացուցիչների հիմնական բնապահպանական հայեցակետերը, որոնք սույն կանոնակարգի նպատակներով համարվել են կարետր, էներգասպառումը եւ ազոտի օքսիդի արտանետումներն են շահագործման փուլում.
- 5) նախապատրաստական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2009/125/ԵՀ հրահանգի I հավելվածի 1-ին մասում նշված՝ էկոնախագծման այլ պարամետրերին ներկայացվող պահանջները կիրառելի չեն սենքի տեղային տաքացուցիչների դեպքում.
- 6) սույն կանոնակարգի շրջանակը պետք է ներառի սենքի տեղային տաքացուցիչներ, որոնք նախատեսված են գազային կամ հեղուկ վառելիքի եւ էլեկտրականության օգտագործման համար: Սենքի տեղային այն տաքացուցիչները, որոնք ունեն հեղուկ ջերմակրով ջեռուցման անուղղակի ֆունկցիոնալ հնարավորություններ, նույնպես ներառված են սույն կանոնակարգի շրջանակներում:

- 7) սենքի տեղային տաքացուցիչների 2010 թվականի տարեկան էներգասպառումը, ըստ հաշվարկների, կազմել է 1 673 ՊՋ (40,0 մլն.տնհ), ինչը համարժեք է 75,3 մետրիկ տոննա ածխածնի երկօքսիդի արտանետումներին: Ակնկալվում է, որ 2020 թվականին սենքի տեղային տաքացուցիչների տարեկան էներգասպառումը կկազմի 1 630 ՊՋ (39,0 մլն.տնհ), ինչը համարժեք է 71,6 մետրիկ տոննա CO₂-ի.
- 8) սենքի տեղային տաքացուցիչների էներգասպառումը կարող է նվազեցվել՝ կիրառելով գոյություն ունեցող չարտոնագրված տեխնոլոգիաները՝ առանց այդ արտադրանքի գնման եւ շահագործման հետ կապված ընդհանուր ծախսերն ավելացնելու.
- 9) ըստ նախնական գնահատումների՝ սենքի տեղային տաքացուցիչներից ազոտի օքսիդի (NO_x) տարեկան արտանետումները 2010 թվականին պետք է համարժեք լինեին 5,6 կիլոտոննա ծծմբի օքսիդին (SO_x): Անդամ պետությունների կողմից ձեռնարկված հատուկ միջոցառումների եւ տեխնոլոգիական զարգացման արդյունքում ակնկալվում է, որ 2012 թվականին այդ արտանետումները պետք է լինեն 4,9 կիլոտոննա SO_x-ին համարժեք.
- 10) սենքի տեղային տաքացուցիչների արտանետումները հետագայում կարող են նվազեցվել՝ կիրառելով գոյություն ունեցող չարտոնագրված տեխնոլոգիաները՝ առանց այդ արտադրանքի գնման եւ շահագործման հետ կապված ընդհանուր ծախսերն ավելացնելու.
- 11) միաժամանակ ակնկալվում է, որ սույն կանոնակարգով եւ Հանձնաժողովի թիվ 2015/1186 ¹ պատվիրակված կանոնակարգով (ԵՄ) սահմանված՝ էկոնախագծմանը ներկայացվող պահանջները մինչեւ 2020 թվականը նախնական հաշվարկով հանգեցնելու են տարեկան

¹ Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 24-ի թիվ 2015/1186 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգ, որը լրացնում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը՝ սենքի տեղային տաքացուցիչների էներգապիտակավորման առումով (տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 20-րդ էջը):

մոտավորապես 157 ՊՋ (11 մլն.տնհ) էներգախնայողության՝ համապատասխանաբար CO₂-ի 6,7 մետրիկ տոննա նվազեցմամբ.

- 12) ակնկալվում է, որ մինչև 2020 թվականը սույն կանոնակարգով սահմանված՝ էկոնախագծմանը ներկայացվող պահանջները կհանգեցնեն տարեկան SO_x-ի 0,6 կիլոտոննա արտանետումներին համարժեք նվազեցման.
- 13) սույն կանոնակարգով սահմանվում են տարբեր տեխնիկական բնութագրերով արտադրատեսակներ: Եթե դրանց մասով սահմանվեին արդյունավետության նույն պահանջները, ապա որոշ տեխնոլոգիաների շուկայահանումը կարգելվեր, ինչը սպառողների վրա բացասական ազդեցություն կունենար: Հետևաբար էկոնախագծմանը ներկայացվող այնպիսի պահանջները, որոնք համարժեք են յուրաքանչյուր տեխնոլոգիայի հնարավորություններին, շուկայում ստեղծում են հավասար մրցակցային պայմաններ.
- 14) էկոնախագծմանը ներկայացվող պահանջների միջոցով պետք է Միության տարածքում ներդաշնակեցվեն սենքի տեղային տաքացուցիչների էներգասպառման եւ ազոտի օքսիդի արտանետումների մասով պահանջները, որպեսզի ներքին շուկայի գործունեությունը եւ այդ արտադրատեսակների բնապահպանական ցուցանիշները բարելավվեն.
- 15) սենքի տեղային տաքացուցիչների էներգաարդյունավետությունը դրանք իրական կյանքում շահագործելիս նվազում է՝ համեմատած փորձարկման ժամանակ գրանցած էներգաարդյունավետության հետ: Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունն օգտակար էներգաարդյունավետության սահմաններին մոտեցնելու համար արտադրողները պետք է խրախուսվեն հսկողություն իրականացնելու հարցում: Այդ իսկ պատճառով այդ երկու արժեքների միջև տարբերությունների մասով նախատեսվում է համընդհանուր

նվազեցում: Այս նվազեցմանը կարելի է հասնել՝ հսկողության մի շարք տարբերակներ ընտրելով.

- 16) Էկոնախագծման պահանջները չպետք է վերջնական սպառողի տեսանկյունից ազդեն սենքի տեղային տաքացուցիչների ֆունկցիոնալ հնարավորությունների եւ մատչելիության վրա եւ չպետք է բացասական ազդեցություն ունենան առողջության, անվտանգության եւ շրջակա միջավայրի վրա.
- 17) Էկոնախագծման պահանջները ներկայացնելու համար սահմանված ժամկետները պետք է բավարար լինեն, որպեսզի արտադրողները վերանախագծեն իրենց՝ սույն կանոնակարգով նախատեսված արտադրատեսակները: Ժամկետը սահմանելիս պետք է հաշվի առնվեն արտադրողների, մասնավորապես՝ փոքր եւ միջին ձեռնարկությունների կատարած ծախսերի մասով հնարավոր հետեւանքները՝ միեւնույն ժամանակ ապահովելով սույն կանոնակարգի նպատակների ժամանակին իրականացումը.
- 18) արտադրանքի պարամետրերը պետք է չափվեն եւ հաշվարկվեն՝ օգտագործելով հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման եւ հաշվարկման մեթոդներ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդների, այդ թվում՝ առկայության դեպքում ստանդարտացման եվրոպական այն կազմակերպությունների կողմից ընդունված ներդաշնակեցված չափորոշիչների վրա, որոնք հետեւում են Հանձնաժողովի պահանջին՝ համաձայն Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1025/2012 կանոնակարգով (ԵՄ) սահմանված ընթացակարգերի ²

² «Եվրոպական ստանդարտացման մասին» եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1025/2012 (ԵՄ) կանոնակարգ, որով փոփոխություն է կատարվում Խորհրդի 89/686/ԵՏՀ եւ 93/15/ԵՏՀ հրահանգներում եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 94/9/ԵՀ, 94/25/ԵՀ, 95/16/ԵՀ, 97/23/ԵՀ, 98/34/ԵՀ, 2004/22/ԵՀ, 2007/23/ԵՀ, 2009/23/ԵՀ եւ 2009/105/ԵՀ հրահանգներում եւ որով ուժը կորցրած է ճանաչվում Խորհրդի 87/95/ԵՏՀ որոշումը եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1673/2006/ԵՀ որոշումը (ՊՏ L 316, 14.11.2012թ., էջ 12):

- 19) 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն՝ սույն կանոնակարգով սահմանվում են, թե համապատասխանության գնահատման որ ընթացակարգերն են կիրառելի.
- 20) համապատասխանության ստուգումները դյուրացնելու համար արտադրողները տեխնիկական փաստաթղթերում պետք է ներկայացնեն 2009/125/ԵՀ հրահանգի IV եւ V հավելվածներում նշված տեղեկություններն այնքանով, որքանով այդ տեղեկություններն առնչվում են սույն կանոնակարգով սահմանված պահանջներին.
- 21) սենքի տեղային տաքացուցիչների շրջակա միջավայրի վրա ազդեցությունն էլ ավելի նվազեցնելու համար արտադրողները պետք է տեղեկություններ տրամադրեն դրանց քանդման, վերամշակման կամ դուրսգրման մասին.
- 22) Ի լրումն սույն կանոնակարգով սահմանված պարտադիր իրավական ուժ ունեցող պահանջների՝ գոյություն ունեցող լավագույն տեխնոլոգիաների մասով պետք է սահմանվեն կողմնորոշիչ հենանիշեր՝ ապահովելով սենքի տեղային տաքացուցիչների շահագործման ամբողջ ժամկետի ընթացքում դրանց էկոլոգիական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հեշտ հասանելիությունը եւ մատչելիությունը.
- 23) սույն կանոնակարգով նախատեսված միջոցառումները համապատասխանում են 2009/125/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

Սույն կանոնակարգով սահմանվում են 50 կՎտ կամ պակաս անվանական ջերմային հզորությամբ կենցաղային նպատակներով սենքի տեղային տաքացուցիչների եւ արտադրանքի կամ մեկ սեգմենտի՝ 120 կՎտ անվանական ջերմային հզորությամբ առետրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների շուկայահանման եւ շահագործման համար էկոնախազմման պահանջները:

Սույն կանոնակարգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ՝

- ա) էլեկտրական ճնշակներից կամ վառելիքից ջերմանջատման համար գոլորշու խտացման կամ կլանման ցիկլով սենքի տեղային տաքացուցիչներ.
- բ) սենքի տեղային այն տաքացուցիչները, որոնք նախատեսված են ջերմահաղորդման կամ ջերմաճառագայթման միջոցով մարդկանց համար որոշակի ջերմային հարմարավետություն ստեղծելու եւ պահպանելու համար փակ տարածքները ջեռուցելուց տարբերվող նպատակներով օգտագործման համար.
- գ) սենքի տեղային այն տաքացուցիչները, որոնք նախատեսված են միայն դրսում օգտագործման համար.
- դ) սենքի տեղային այն տաքացուցիչները, որոնց ուղղակի ջերմային հզորությունն անվանական ջերմային հզորության ուղղակի եւ անուղղակի համակցված ջերմային հզորության 6%-ից պակաս է.
- ե) օդատաքացուցիչները.
- զ) շոգեբաղնիքի վառարանները.
- է) ոչ ավտոնոմ տաքացուցիչներ:

*Հոդված 2***Սահմանումները**

Ի լրումն 2009/125/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածով տրված սահմանումների՝ սույն փաստաթղթում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

- 1) «տեղային տաքացուցիչ» նշանակում է սենքի տեղային ջեռուցման սարք, որում ջերմությունն անջատվում է ուղղակի ջերմափոխանցման միջոցով կամ հեղուկին ջերմության փոխանցման հետ համակցված ուղղակի ջերմափոխանցման միջոցով այն փակ տարածքում, որտեղ արտադրանքը տեղակայված է, մարդկանց համար ջերմային հարմարավետության որոշակի մակարդակ ապահովելու եւ այդ մակարդակը պահպանելու համար, հնարավորության դեպքում՝ այլ տարածքներ ջերմափոխանցման համակցությամբ, եւ սարքավորված է մեկ կամ ավելի ջերմագեներատորներով, որոնք էլեկտրական էներգիան կամ գազային կամ հեղուկ վառելիքն ուղղակիորեն փոխակերպում են ջերմության հոսանքի ջերմային ազդեցության՝ Ջոուլի օրենքի կիրառման կամ համապատասխանաբար վառելիքի այրման միջոցով.
- 2) «կենցաղային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչ» նշանակում է սենքի տեղային տաքացուցիչ, որը տարբերվում է առետրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչներից.
- 3) «գազային վառելիքով աշխատող տեղային տաքացուցիչ» նշանակում է գազային վառելիքով աշխատող բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչ կամ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչ.
- 4) «հեղուկ վառելիքով աշխատող տեղային տաքացուցիչ» նշանակում է հեղուկ վառելիքով աշխատող բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչ կամ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչ.

- 5) «տեղային էլեկտրական տաքացուցիչ» նշանակում է սենքի տեղային տաքացուցիչ, որը կիրառում է հոսանքի Ջոուլի՝ ջերմային ազդեցության օրենքը՝ ջերմություն արտադրելու համար.
- 6) «առեւտրային նպատակներով օգտագործվող տեղային տաքացուցիչ» նշանակում է կա՛մ սենքի լուսարձակող տեղային տաքացուցիչ, կա՛մ սենքի խողովակային տեղային տաքացուցիչ.
- 7) «բաց առաջամասով տեղային տաքացուցիչ» նշանակում է գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչ, որի կրակի օջախը եւ այրման գազերը հերմետիկ մեկուսացված չեն այն սենքից, որտեղ տեղակայված է արտադրանքը, եւ որը հերմետիկ միացված է ծխնելույզին կամ հնոցի անցքին կամ այրման արգասիքների հեռացման համար պահանջում է ծխանցքի առկայություն.
- 8) «փակ առաջամասով տեղային տաքացուցիչ» նշանակում է գազային, հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչ, որի կրակի օջախը եւ այրման գազերը հերմետիկ մեկուսացված չեն այն սենքից, որտեղ տեղակայված է արտադրանքը, եւ որը հերմետիկ միացված է ծխնելույզին կամ հնոցի անցքին կամ այրման արգասիքների հեռացման համար պահանջում է ծխանցքի առկայություն.
- 9) «սենքի շարժական տեղային էլեկտրական տաքացուցիչ» նշանակում է սենքի տեղային էլեկտրական տաքացուցիչ, որը սենքի ոչ շարժական էլեկտրական տեղային տաքացուցիչ, սենքի տեղային ջերմակուտակիչ էլեկտրական տաքացուցիչ, սենքի ստորգետնյա տեղային էլեկտրական տաքացուցիչ, սենքի ճառագայթային տեղային էլեկտրական տաքացուցիչ, տեսանելիորեն լուսարձակող սենքի տեղային էլեկտրական տաքացուցիչ կամ ոչ ավտոնոմ տաքացուցիչ չէ.
- 10) «սենքի ոչ շարժական տեղային էլեկտրական տաքացուցիչ» նշանակում է սենքի տեղային էլեկտրական տաքացուցիչ, որը նախատեսված չէ ջերմային էներգիա կուտակելու համար եւ նախատեսված է որոշակի

տարածքում ամրացված կամ ամրակցված վիճակում օգտագործելու կամ պատի վրա տեղադրման համար եւ ոչ թե շենքի կառույցներում կամ շինարարական-հարդարման արտադրատեսակներում ներառելու համար.

- 11) «սենքի տեղային ջերմակուտակիչ տաքացուցիչ» նշանակում է սենքի տեղային ջերմակուտակիչ էլեկտրական տաքացուցիչ, որը նախատեսված է կուտակման փուլից հետո կուտակիչ մեկուսացված միջուկում ջերմություն պահելու եւ մի քանի ժամ այն արտամղելու համար.
- 12) «սենքի ստորգետնյա տեղային էլեկտրական տաքացուցիչ» նշանակում է սենքի տեղային էլեկտրական տաքացուցիչ, որը նախատեսված է շենքի կառույցներում կամ շինարարական-հարդարման արտադրատեսակներում ներառելու համար.
- 13) «սենքի ճառագայթային տեղային էլեկտրական տաքացուցիչ» նշանակում է սենքի տեղային էլեկտրական տաքացուցիչ, որում ջերմազատիչ տարրը պետք է ուղղված լինի դեպի օգտագործման վայրը, որպեսզի դրա ջերմային ճառագայթումը տաքացնի տաքացվելիք օբյեկտները, եւ որի դեպքում ջերմազատիչ տարրը ծածկող ցանցի ջերմաստիճանը սովորական օգտագործման պայմաններում բարձրանում է առնվազն 130°C-ով եւ (կամ) 100 °C-ով՝ այլ մակերեսների դեպքում.
- 14) «սենքի տեսանելի լուսարձակող, ճառագայթային տեղային էլեկտրական տաքացուցիչ» նշանակում է սենքի տեղային էլեկտրական տաքացուցիչ, որում ջեռուցիչ տարրը տեսանելի է տաքացուցչի արտաքին հատվածից, եւ որի ջերմաստիճանը նորմալ օգտագործման պայմաններում կարող է բարձրանալ առնվազն 650 °C-ի.
- 15) «շոգեբաղնիքի վառարան» նշանակում է սենքի տաքացուցիչ համարվող արտադրանք, որը ներկառուցված է կամ նախատեսված է չոր կամ թաց շոգեբաղնիքներում կամ նմանատիպ միջավայրերում օգտագործման համար.

- 16) «ոչ ավտոնոմ տաքացուցիչ» նշանակում է սենքի տեղային էլեկտրական տաքացուցիչ, որով հնարավոր չէ ավտոնոմ գործողություն, եւ այն պետք է ազդանշաններ ստանա արտաքին գլխավոր կարգավորչից, որն արտադրատեսակի մաս չէ, սակայն միացված է դրան հաղորդալարով, առանց լարի, էլեկտրացանցով կամ համարժեք տեխնիկայով, որպեսզի կարգավորի դեպի այն սենյակ ջերմազատումը, որում տեղադրված է արտադրանքը.
- 17) «լուսարձակող տեղային տաքացուցիչ» նշանակում է գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչ, որը սարքավորված է այրիչով, որը պետք է տեղադրված լինի գլխի մակերեսային բարձր, ուղղված լինի դեպի օգտագործման տեղը, որպեսզի այրիչի կողմից ջերմության անջատումը, որը գլխավորապես ինֆրակարմիր ճառագայթում է, անմիջապես տաքացնի տաքացման ենթակա օբյեկտները, եւ որի այրման արգասիքներն արտազատվում են այն տարածք, որտեղ այն տեղադրված է.
- 18) «սենքի խողովակային տեղային տաքացուցիչ» նշանակում է գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչ, որը սարքավորված է այրիչով, որը պետք է տեղադրվի գլխի մակերեսային բարձր՝ տաքացվող օբյեկտներին մոտ, սենքը գլխավորապես տաքացնում է այրման արգասիքների ներքին ուղիներով տաքացվող խողովակից կամ խողովակներից արձակվող ինֆրակարմիր ճառագայթման միջոցով, եւ որի այրման արգասիքները հեռացվում են ծխանցքի միջոցով.
- 19) «ջեռուցման խողովակային համակարգ» նշանակում է սենքի խողովակային տեղային տաքացուցիչ, որը պարունակում է մեկից ավելի այրիչներ, որից մեկ այրիչի այրման արգասիքները կարող են լցվել հաջորդ այրիչի մեջ, եւ որից բազմաթիվ այրիչների այրման արգասիքները պետք է դուրս բերվեն մեկ արտածող օդափոխիչով.

- 20) «խողովակային ջեռուցման սեգմենտ» նշանակում է խողովակային ջեռուցման սեգմենտի մաս, որը պարունակում է ավտոնոմ ռեժիմի համար անհրաժեշտ բոլոր տարրերը եւ որպես այդպիսին, կարող է փորձարկվել խողովակային ջեռուցման այլ մասերից անջատ.
- 21) «ծխանցք չունեցող տաքացուցիչ» նշանակում է գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող՝ սենքի լուսարձակող տեղային տաքացուցչից տարբերվող՝ սենքի տեղային տաքացուցիչ, որն իր այրման արգասիքներն արտազատում է այն սենք, որտեղ գտնվում է արտադրանքը.
- 22) «դեպի ծխնելույզ բաց մուտքով տաքացուցիչ» նշանակում է գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչ, որը նախատեսված է ծխնելույզի տակ կամ հնոցում տեղադրման համար՝ չփակելով արտադրանքի եւ ծխնելույզի կամ հնոցի անցքի միջեւ ընկած հատվածը եւ թույլ տալով, որ այրման արգասիքներն այրման օջախից անխոչընդոտ անցնեն ծխնելույզ կամ ծխանցք.
- 23) «օդատաքացուցիչ» նշանակում է արտադրանք, որը ջերմություն է մատակարարում միայն այնպիսի օդային ջեռուցման համակարգին, որը կարելի է խողովակալել, եւ որը նախատեսված է որոշակի տեղում ամրացված կամ ամրակցված օգտագործման կամ պատի վրա տեղադրման համար, տեղաբաշխում է օդն օդափուք սարքի միջոցով, որպեսզի մարդկանց համար ջերմային հարմարավետության որոշակի մակարդակ ապահովվի, եւ այդ մակարդակը պահպանվի այն փակ տարածքում, որտեղ տեղադրված է արտադրանքը.
- 24) «ուղղակի ջերմային հզորություն» նշանակում է արտադրանքի ջերմային հզորությունը ճառագայթման եւ արտադրանքի կողմից օդում անջատված ջերմության փոխանցման միջոցով՝ բացառությամբ արտադրանքի՝ կՎ-ով արտահայտված այն ջերմային հզորության, որը փոխանցվել է հեղուկ էներգակրի.

- 25) «անուղղակի ջերմային հզորություն» նշանակում է արտադրանքի՝ կՎ-ով արտահայտված այն ջերմային հզորությունը, որը փոխանցվել է հեղուկ էներգակրի ջերմային էներգիայի արտադրության այն նույն գործընթացի միջոցով, որով ապահովվում է արտադրանքի ուղղակի ջերմային հզորությունը.
- 26) «անուղղակի ջեռուցման ֆունկցիոնալ հնարավորություն» նշանակում է արտադրանքի՝ ջերմային ընդհանուր հզորությունը հեղուկ էներգակրին փոխանցելու կարողությունը՝ սենքի ջեռուցման կամ կենցաղային տաք ջրի արտադրության նպատակով օգտագործման համար.
- 27) «անվանական ջերմային հզորություն» (*P_{անվ.}*) նշանակում է սենքի տեղային տաքացուցչի՝ կՎ-ով արտահայտված ջերմային հզորությունը, որը ներառում է ուղղակի ջերմային հզորությունը եւ անուղղակի ջերմային հզորությունը (անհրաժեշտության դեպքում), երբ այն աշխատում է արտադրողի կողմից հայտարարված՝ առավելագույն ջերմային հզորության ռեժիմով, որը կարող է պահպանվել տեսական ժամանակահատվածի ընթացքում.
- 28) «նվազագույն ջերմային հզորություն» (*P_{նվազ.}*) նշանակում է սենքի տեղային տաքացուցչի՝ կՎ-ով արտահայտված ջերմային հզորությունը, որը ներառում է ուղղակի ջերմային հզորությունը եւ անուղղակի ջերմային հզորությունը (անհրաժեշտության դեպքում), երբ այն աշխատում է արտադրողի կողմից հայտարարված նվազագույն ջերմային հզորության ռեժիմով.
- 29) «առավելագույն շարունակական ջերմարտադրություն» (*P_{առավ., շար.}*) նշանակում է սենքի տեղային էլեկտրական տաքացուցչի հայտարարված ջերմային հզորություն, երբ այն աշխատում է արտադրողի կողմից հայտարարված՝ կՎտ-ով արտահայտված առավելագույն ջերմային հզորության ռեժիմով, որը կարող է պահպանվել տեսական ժամանակահատվածի ընթացքում.

30) «բացօթյա օգտագործման համար նախատեսված» նշանակում է, որ արտադրանքը հարմար է փակ տարածքներից դուրս անվտանգ շահագործման, այդ թվում՝ բացօթյա պայմաններում հնարավոր օգտագործման համար.

31) «համարժեք մոդել» նշանակում է մոդել, որը շուկայահանվել է II հավելվածի 3-րդ կետի 1-ին, 2-րդ կամ 3-րդ աղյուսակներով սահմանված տեխնիկական նույն պարամետրերով, ինչ միեւնույն արտադրողի կողմից շուկայահանված մեկ այլ մոդել:

II-V հավելվածների նպատակներով լրացուցիչ սահմանումները ներկայացված են I հավելվածում:

Հոդված 3

Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները եւ ժամանակացույցը

1. Սենքի տեղային տաքացուցիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջները սահմանված են II հավելվածում:
2. Սենքի տեղային տաքացուցիչները պետք է համապատասխանեն II հավելվածով նախատեսված պահանջներին 2018 թվականի հունվարի 1-ից:
3. Էկոնախագծման պահանջներին համապատասխանությունը չափվում է հաշվարկվում է II հավելվածում սահմանված մեթոդներին համապատասխան:

Հոդված 4

Համապատասխանության գնահատումը

1. 2009/125/ԵՀ հրահանգի 8(2) հոդվածում նշված համապատասխանության գնահատման ընթացակարգը տվյալ հրահանգի IV հավելվածով սահմանված

նախագծման աշխատանքների վերահսկողության ներքին համակարգն է կամ տվյալ հրահանգի V հավելվածով սահմանված կառավարման համակարգը:

2. 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխանության գնահատման նպատակներով տեխնիկական փաստաթղթերը պարունակում են սույն կանոնակարգի II հավելվածի 3(բ) կետով սահմանված տեղեկությունները:
3. Եթե մոդելի վերաբերյալ տեխնիկական փաստաթղթերում ներառված տեղեկությունները ստացվել են նախագծման հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում կամ համարժեք այլ սարքերից արտարկման միջոցով կամ այդ երկու միջոցով էլ, ապա տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն այդ հաշվարկների կամ արտարկումների կամ այդ երկուսի մանրամասները, ինչպես նաև կատարված հաշվարկների ճշգրտությունը ստուգելու համար արտադրողների կողմից կատարված ստուգումների մանրամասները: Նման դեպքերում տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն նաև բոլոր մյուս համարժեք մոդելների ցանկը, եթե տեխնիկական փաստաթղթերում պարունակվող տեղեկությունները ստացվել են դրա հիման վրա:

Հոդված 5

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Սույն կանոնակարգի II հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով անդամ պետությունները 2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված՝ շուկայի վերահսկողության ստուգումներն իրականացնելիս կիրառում են սույն կանոնակարգի IV հավելվածում ներկայացված ստուգման ընթացակարգը:

Հոդված 6

Կողմնորոշիչ հենանիշերը

V հավելվածով սահմանվում են սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին շուկայում առկա ամենաարդյունավետ սենքի տեղային տաքացուցիչների համար նախատեսված կողմնորոշիչ հենանիշերը:

Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը վերանայում է սույն կանոնակարգը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը, եւ այդ վերանայման արդյունքը Խորհրդատվական ֆորում է ներկայացնում ոչ ուշ, քան 2019 թվականի հունվարի 1-ը: Հատկապես, վերանայմամբ գնահատվում է հետեւյալը՝

- արդյոք տեղին է սահմանել էկոնախագծման առավել խիստ պահանջներ՝ էներգաարդյունավետության եւ ազոտի օքսիդի արտանետումների (NO_x) համար.
- արդյոք պետք է փոփոխել ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները.
- սենքի տեղային տաքացուցիչների սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության գնահատման համար օգտագործվող ճշգրտման գործակիցների հավաստիությունը.
- երրորդ կողմի հավաստագրման նպատակահարմարությունը:

Հոդված 8

Անցումային դրույթներ

Մինչեւ 2018 թվականի հունվարի 1-ն անդամ պետությունները կարող են թույլատրել սենքի այն տեղային տաքացուցիչների շուկայահանումն ու

շահագործումը, որոնք համապատասխանում են սենքի տեղային տաքացուցիչների էներգաարդյունավետության եւ ազոտի օքսիդների վերաբերյալ գործող ազգային դրույթներին:

Հոդված 9

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության *պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակման օրվան հաջորդող քսաներորդ օրը:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2015 թվականի ապրիլի 28-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժան-Կլոդ ՅՈՒՆԿԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ I**II-V հավելվածների համար կիրառելի սահմանումները**

II-V հավելվածների նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

- 1) «սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետություն» (η_ս) նշանակում է սենքի տեղային տաքացուցչի միջոցով սենքի ջեռուցման բավարարված պահանջարկի եւ այդ պահանջը բավարարելու համար անհրաժեշտ տարեկան էներգասպառման միջեւ հարաբերակցություն, որն արտահայտված է տոկոսով.
- 2) «փոխարկման գործակից» (Φ_Գ) նշանակում է գործակից, որն արտացոլում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012/27/ԵՀ հրահանգում նշված՝ ԵՄ-ում էլեկտրաէներգիայի արտադրության օգտակար գործողության միջին գործակցի գնահատված 40%-ը ¹ փոխարկման գործակցի արժեքն է Φ_Գ = 2,5.
- 3) «ազոտի օքսիդների արտանետումներ» նշանակում է մգ/կՎտժ_{ստաբային}-ով արտահայտված անվանական ջերմային հզորությամբ ազոտի օքսիդների արտանետումներ, որը հիմնված է ԱԶԱ-ի վրա՝ գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների եւ առետրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների համար.
- 4) «ստորին այրման ջերմատվության արժեք» (ՍԶԱ) նշանակում է վառելիքի համապատասխան քանակի խոնավություն պարունակող՝ վառելիքի միավորի կողմից անջատված ընդհանուր ջերմաքանակը, երբ այդ վառելիքն ամբողջությամբ այրվում է թթվածնի հետ, եւ երբ

¹ «Էներգախնայողության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի 2012/27/ԵՀ հրահանգը, որով փոփոխություններ են կատարվում 2009/125/ԵՀ եւ 2010/30/ԵՄ հրահանգներում եւ ուժը կորցրած են ճանաչվում 2004/8/ԵՀ եւ 2006/32/ԵՀ հրահանգները (ՊՏ L 315, 14.11.2012թ., էջ 1):

այրման արգասիքների ջերմաստիճանը չի վերադառնում շրջակա միջավայրի ջերմաստիճանին.

- 5) «այրման ջերմատվության արժեքն առանց խոնավության» (ԱՋԱ) նշանակում է բնական խոնավություն չպարունակող վառելիքի միավորի կողմից անջատված ընդհանուր ջերմաքանակ, երբ այդ վառելիքն ամբողջությամբ այրվում է թթվածնի հետ, եւ երբ այրման արգասիքների ջերմաստիճանը չի վերադառնում շրջակա միջավայրի ջերմաստիճանին. այս քանակը ներառում է վառելիքում առկա ջրածնի ցանկացած քանակության այրման հետեւանքով առաջացած ջրային գոլորշու խտացված ջերմությունը.
- 6) «օգտակար էներգաարդյունավետությունն անվանական կամ նվազագույն ջերմային հզորության դեպքում» (համապատասխանաբար՝ $\eta_{th,անվան.}$ or $\eta_{th,նվազ.}$) նշանակում է օգտակար ջերմային հզորության եւ սենքի տեղային տաքացուցչի էներգիայի ընդհանուր մուտքային հզորության հարաբերակցություն, որն արտահայտված է տոկոսով, հետեւաբար՝
- ա) կենցաղային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում էներգիայի ընդհանուր մուտքային հզորությունն արտահայտված է ԱՋԱ-ով եւ (կամ) վերջնական էներգիայով՝ բազմապատկած ՓԳ-ով.
- բ) առետրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում էներգիայի ընդհանուր մուտքային հզորությունն արտահայտված է ԱՋԱ-ով եւ (կամ) վերջնական էներգիայով՝ բազմապատկած ՓԳ-ով.
- 7) «էլեկտրաէներգիայի պահանջարկն անվանական ջերմային հզորության դեպքում» ($e_{առավ.}$) նշանակում է սենքի տեղային տաքացուցչի էլեկտրաէներգիայի սպառումն անվանական ջերմային հզորություն

ապահովելիս: Էլեկտրաէներգիայի սպառումը՝ արտահայտված կՎ-ով, սահմանվում է՝ հաշվի չառնելով շրջապատիչի կողմից էներգիայի սպառումն այն դեպքում, երբ արտադրանքն առաջարկում է անուղղակի ջեռուցման ֆունկցիոնալ հնարավորություն եւ սարքավորված է շրջապատիչով:

- 8) «Էլեկտրաէներգիայի պահանջարկը նվազագույն ջերմային հզորության դեպքում» (e_{ևսլազ.}) նշանակում է տեղային տաքացուցչի կողմից էլեկտրաէներգիայի սպառումը նվազագույն ջերմային հզորություն ապահովելիս: Էլեկտրաէներգիայի սպառումը՝ արտահայտված կՎ-ով, սահմանվում է՝ հաշվի չառնելով շրջապատիչի կողմից էներգիայի սպառումն այն դեպքում, երբ արտադրանքն առաջարկում է անուղղակի ջեռուցման գործառույթ եւ սարքավորված է շրջապատիչով:
- 9) «Էլեկտրաէներգիայի պահանջմունքը սպասման ռեժիմում» (e_{ևսո.}) նշանակում է արտադրանքի կողմից էլեկտրաէներգիայի սպառումը սպասման ռեժիմում՝ արտահայտված կՎտ-ով:
- 10) «մշտական բռնկման բոցի հզորության պահանջարկ» (P_{բռնկ.բոց.}) նշանակում է արտադրանքի կողմից գազային կամ հեղուկ վառելիքի սպառումը՝ արտահայտված կՎտ-ով, անվանական կամ մասնակի ջերմային բեռնվածության համար անհրաժեշտ առավել հզոր այրման գործընթացի համար նախքան հիմնական այրիչի միանալն ավելի քան 5 րոպե վառքի դեպքում որպես բոցավառման աղբյուր ծառայելու նպատակով:
- 11) «ջերմության՝ ձեռքով լիցքավորման կարգավորիչ՝ ինտեգրված ջերմապահպանիչով» նշանակում է ձեռքով աշխատող սենսորային սարք, որը ինտեգրված է արտադրանքի մեջ, որը չափում եւ կարգավորում է դրա ներքին ջերմաստիճանը եւ փոփոխում կուտակված ջերմության քանակը՝ ըստ սենյակային ջերմաստիճանի եւ (կամ) դրսի ջերմաստիճանի հարաբերակցության:

- 12) «ջերմության՝ ձեռքով լիցքավորման կարգավորիչ՝ սենյակի եւ (կամ) դրսի ջերմաստիճանի հետադարձ կապով» նշանակում է ձեռքով աշխատող սենսորային սարք, որն ինտեգրված է արտադրանքի մեջ, որը չափում է դրա ներքին ջերմաստիճանը եւ փոփոխում կուտակված ջերմության քանակը՝ ըստ սենյակային ջերմաստիճանի եւ (կամ) դրսի ջերմաստիճանի հարաբերակցության.
- 13) «ջերմության լիցքավորման էլեկտրոնային կարգավորիչ՝ սենյակային եւ (կամ) արտաքին ջերմաստիճանի հետադարձ կապով կամ էներգամատակարարողի կողմից կարգավորվող» նշանակում է ավտոմատ աշխատող սենսորային սարք, որն ինտեգրված է արտադրանքի մեջ, որը չափում է դրա ներքին ջերմաստիճանը եւ փոփոխում կուտակված ջերմության քանակը՝ ըստ սենյակային ջերմաստիճանի եւ (կամ) դրսի ջերմաստիճանի հարաբերակցության կամ այն սարքի, որի լիցքավորման ռեժիմը կարող է կարգավորվել էներգիա մատակարարողի կողմից.
- 14) «հովհարիչով կարգավորվող ջերմարտադրություն» նշանակում է, որ արտադրանքը սարքավորված է ինտեգրված եւ վերահսկելի հովհարիչով (կամ հովհարիչներով)՝ ջեռուցման պահանջարկին համապատասխանեցնելու համար ջերմարտադրությունը տարբերակելու նպատակով.
- 15) «միաֆազ ջերմային հզորություն՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության» նշանակում է, որ արտադրանքը չունի իր ջերմային հզորությունն ավտոմատ կերպով փոփոխելու հնարավորություն, եւ չկա սենյակային ջերմաստիճանի մասով հետադարձ կապ, որ հնարավոր լինի ավտոմատ հարմարեցնել ջերմային հզորությունը .
- 16) «ձեռքով կարգավորվող երկու կամ ավելի ֆազեր՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության» նշանակում է՝

արտադրանքի ջերմային հզորությունը հնարավոր է ձեռքով փոփոխել ջերմային հզորության երկու կամ ավելի մակարդակների միջոցով, եւ այն սարքավորված չէ այնպիսի սարքով, որն ավտոմատ կերպով կարգավորում է ջերմային հզորությունը՝ ըստ պահանջվող սենյակային ջերմաստիճանի.

- 17) «մեխանիկական ջերմապահպանիչով սենյակային ջերմաստիճանի կարգավորմամբ» նշանակում է՝ արտադրանքը սարքավորված է ոչ էլեկտրոնային սարքով, որը հնարավորություն է տալիս, որ արտադրանքը որոշակի ժամանակահատվածի ընթացքում ավտոմատ կերպով փոփոխի իր ջերմային հզորությունը՝ ըստ սենյակային ջերմային հարմարավետության պահանջվող մակարդակի.
- 18) «սենյակային ջերմաստիճանի էլեկտրոնային կարգավորմամբ» նշանակում է՝ արտադրանքը սարքավորված է ինտեգրված կամ արտաքին մասում տեղադրված էլեկտրոնային սարքով, որը հնարավորություն է տալիս, որ արտադրանքը որոշակի ժամանակահատվածի ընթացքում ավտոմատ կերպով փոփոխի իր ջերմային հզորությունը՝ ըստ սենյակային ջերմային հարմարավետության պահանջվող մակարդակի.
- 19) «ավտոմատ միացման օրական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով» նշանակում է՝ արտադրանքը սարքավորված է ինտեգրված կամ արտաքին մասում տեղադրված էլեկտրոնային սարքով, որը հնարավորություն է տալիս, որ արտադրանքը որոշակի ժամանակահատվածի ընթացքում ավտոմատ կերպով փոփոխի իր ջերմային հզորությունը՝ ըստ սենյակային ջերմային հարմարավետության պահանջվող մակարդակի, ինչպես նաեւ հնարավորություն է տալիս սահմանել ժամանակն ու ջերմաստիճանի մակարդակը 24-ժամյա ժամակարգավորչի միջակայքի համար.

- 20) «ավտոմատ միացման շաբաթական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով» նշանակում է՝ արտադրանքը սարքավորված է ինտեգրված կամ արտաքին մասում տեղադրված էլեկտրոնային սարքով, որը հնարավորություն է տալիս, որ արտադրանքը որոշակի ժամանակահատվածի ընթացքում ավտոմատ կերպով փոփոխի իր ջերմային հզորությունը՝ ըստ սենյակային ջերմային հարմարավետության պահանջվող մակարդակի, ինչպես նաև հնարավորություն է տալիս սահմանել ժամանակն ու ջերմաստիճանի մակարդակն ամբողջ մեկ շաբաթվա համար: Այդ 7-օրյա ժամկետի ընթացքում կարգավորումներն օրական կտրվածքով փոփոխելու հնարավորություն պետք է լինի.
- 21) «ներկայության դետեկտորով սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմ» նշանակում է՝ արտադրանքը սարքավորված է ինտեգրված կամ արտաքին մասում տեղադրված էլեկտրոնային սարքով, որն ավտոմատ կերպով նվազեցնում է սենյակային ջերմաստիճանի տրված մեծությունը, երբ սարքը սենյակում որեւէ անձ չի հայտնաբերում.
- 22) «բաց պատուհան դետեկտորով սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմ» նշանակում է՝ արտադրանքը սարքավորված է ինտեգրված կամ արտաքին մասում տեղադրված էլեկտրոնային սարքով, որը նվազեցնում է ջերմային հզորությունը պատուհանը կամ դուռը բաց լինելու դեպքում: Երբ սենսորն օգտագործվում է պատուհանի կամ դռան բացվելը ճանաչելու համար, այն կարող է տեղադրվել արտադրատեսակի հետ համատեղ, արտադրատեսակից առանձին, ներկառուցվել շենքի կառուցվածքի մեջ, կամ կարող է տեղի ունենալ այդ տարրերակների համակցությունը.

- 23) «հեռակառավարման մեխանիզմով» նշանակում է գործառույթ, որն արտադրանքի կառավարման միջոցով հեռահար ազդեցության հնարավորություն է տալիս այն շենքից դուրս, որտեղ տեղադրված է արտադրանքը.
- 24) «ադապտացիոն գործարկման մեխանիզմով» նշանակում է գործառույթ, որը կանխատեսում է նախաձեռնում է ջեռուցման օպտիմալ մեկնարկը, որպեսզի պահանջվող ժամին հասնի ջերմաստիճանի նշված արժեքին.
- 25) «աշխատանքային ժամի սահմանափակմամբ» նշանակում է, որ արտադրանքն ունի գործառույթ, որով նախապես սահմանված ժամանակահատվածից հետո ավտոմատ ապասկտիվացվում է արտադրանքը.
- 26) «սեւ բալոնի սենսորով» նշանակում է, որ արտադրանքը սարքավորված է ինտեգրված կամ արտաքին մասում տեղադրված էլեկտրական սարքով, որով չափվում է օդը եւ ճառագայթային ջերմաստիճանը.
- 27) «միաֆազ» նշանակում է, որ արտադրանքը նախատեսված չէ ջերմային հզորությունն ավտոմատ փոփոխելու համար.
- 28) «երկֆազ» նշանակում է, որ արտադրանքը նախատեսված է երկու որոշակի մակարդակներում ջերմային հզորությունն ավտոմատ կարգավորելու համար՝ ըստ ներսի օդի իրական ջերմաստիճանի եւ ներսի օդի պահանջվող ջերմաստիճանի հարաբերակցության, ինչը կարգավորվում է սենսորային սարքերով եւ ինտերֆեյսի միջոցով, որն անպայմանորեն չի կազմում արտադրանքի անբաժանելի մասը.
- 29) «մոդուլացիա» նշանակում է, որ արտադրանքը նախատեսված է երեք կամ ավելի որոշակի մակարդակներում ջերմարտադրությունն ավտոմատ կարգավորելու համար՝ ըստ ներսի օդի իրական ջերմաստիճանի եւ ներսի օդի պահանջվող ջերմաստիճանի հարաբերակցության, որը վերահսկվում է ջերմազգայուն սարքերով եւ

ինտերֆեյսի միջոցով, որն անպայմանորեն չի կազմում արտադրանքի անբաժանելի մասը.

- 30) «սպասման ռեժիմ» նշանակում է մի վիճակ, երբ արտադրանքը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին, նախատեսված ձեռով աշխատելու համար կախված է էլեկտրասնուցման աղբյուրից ստացվող մուտքային էներգիայից եւ կատարում է միայն հետեւյալ ֆունկցիաները, որոնք կարող են շարունակվել անորոշ ժամանակով՝ վերաակտիվացման ֆունկցիա կամ վերաակտիվացման ֆունկցիա եւ միայն վերաակտիվացված գործառույթի ակտիվացման վերաբերյալ նշում եւ (կամ) տեղեկատվության կամ կարգավիճակի ցուցադրում դիսփլեյի վրա.
- 31) «խողովակային համակարգի ջերմարտադրություն» նշանակում է շուկայահանելիս կոնֆիգուրացիայի համակցված խողովակային սեգմենտի կՎտ-ով արտահայտված ջերմարտադրություն.
- 32) «խողովակային սեգմենտի ջերմարտադրություն» նշանակում է խողովակային սեգմենտի կՎտ-ով արտահայտված ջերմարտադրություն, որն այլ խողովակային սեգմենտների հետ միասին խողովակային համակարգի կոնֆիգուրացիայի մաս է կազմում.
- 33) «ճառագայթային գործոն՝ թե՛ անվանական, թե՛ նվազագույն ջերմարտադրության ժամանակ» (ՃԳ_{ան.} կամ ՃԳ_{նվազ.} համապատասխանաբար) նշանակում է արտադրանքի ինֆրակարմիր ջերմարտադրության հարաբերակցությունը համեմատած մուտքային էներգիայի ընդհանուր ծավալի հետ անվանական կամ նվազագույն ջերմարտադրություն ապահովելիս, որը հաշվարկվում է որպես ինֆրակարմիր ջերմարտադրություն՝ բաժանած մուտքային էներգիայի ընդհանուր ծավալին՝ վառելիքի ստորին այրման ջերմատվության արժեքի (UՋԱ) հիման վրա %-ով արտահայտված անվանական կամ նվազագույն ջերմարտադրություն ապահովելիս.

- 34) «պատյանի մեկուսացում» նշանակում է արտադրանքի համար նախատեսված պատյանի կամ արտաքին թաղանթի ջերմային մեկուսացում, որը կիրառվում է ջերմության կորուստը նվազագույնի հասցնելու համար, եթե թույլ է տրվում, որ արտադրանքը տեղադրվի դրսում.
- 35) «պատյանի կորստի գործոն» նշանակում է %-ով արտահայտված ջերմային կորուստներ արտադրանքի այն հատվածից, որը տեղադրված է ջեռուցվելիք փակ տարածքներից դուրս, եւ որը որոշվում է այդ հատվածի համապատասխան պատյանի թափանցելիությամբ.
- 36) «մոդելի նույնականացուցիչ» նշանակում է սովորաբար տառաթվային ծածկագիր, որով որոշակի սենքի տեղային տաքացուցչի մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ արտադրողի անվանմամբ այլ մոդելներից.
- 37) «խոնավության պարունակություն» նշանակում է սենքի տեղային տաքացուցչում օգտագործվող վառելիքի ընդհանուր զանգվածի նկատմամբ վառելիքում պարունակվող ջրի զանգվածը:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ II***Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները****1. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մասով
Էկոնախագծմանը ներկայացվող հատուկ պահանջները**

- ա) Սենքի տեղային տաքացուցիչները պետք է բավարարեն հետևյալ պահանջները 2018 թվականի հունվարի 1-ից՝
- i) գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող, բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 42 %-ից պակաս լինի.
 - ii) գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող, փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 72 %-ից պակաս լինի.
 - iii) սենքի շարժական տեղային էլեկտրական տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 36 %-ից պակաս լինի.
 - iv) 250 Վտ-ից բարձր անվանական ջերմարտադրությամբ սենքի ոչ շարժական տեղային էլեկտրական տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 38 %-ից պակաս լինի.
 - v) 250 Վտ-ին հավասար կամ դրանից ցածր անվանական ջերմարտադրությամբ սենքի ոչ շարժական տեղային էլեկտրական տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 34 %-ից պակաս լինի.
 - vi) սենքի տեղային ջերմակուտակիչ էլեկտրական տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 38,5%-ից պակաս լինի.

- vii) սենքի ստորգետնյա էլեկտրական տեղային տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 38 %-ից պակաս լինի.
- viii) ճառագայթային տեղային էլեկտրական տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 35 %-ից պակաս լինի.
- ix) 1,2 վատից բարձր անվանական ջերմարտադրությամբ սենքի տեսանելի շիկացած ճառագայթային տեղային տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 35 %-ից պակաս լինի.
- x) 1,2 վատին հավասար կամ դրանից ցածր անվանական ջերմարտադրությամբ սենքի տեսանելի շիկացած ճառագայթային տեղային տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 35 %-ից պակաս լինի.
- xi) սենքի լուսարձակող տեղային տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 85 %-ից պակաս լինի.
- xii) սենքի խողովակային տեղային տաքացուցչի՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 74 %-ից պակաս լինի:

2. Արտանետումների մասով էկոնախագծմանը ներկայացվող հատուկ պահանջները

- ա) 2018 թվականի հունվարի 1-ից հեղուկ կամ գազային վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների՝ ազոտի օքսիդի (NO_x) արտանետումները չպետք է գերազանցեն հետևյալ արժեքները՝

- i) գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող, բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների եւ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների՝ NO_x-ի արտանետումները չպետք է գերազանցեն 130 մգ/կՎտժ_{մուտքային}՝ ԱԶԱ-ի վրա հիմնվելով.
- ii) սենքի լուսարձակող տեղային տաքացուցիչների եւ սենքի խողովակավոր տեղային տաքացուցիչների՝ NO_x-ի արտանետումները չպետք է գերազանցեն 200 մգ/կՎտժ_{մուտքային}՝ ԱԶԱ-ի վրա հիմնվելով:

3. Արտադրանքի տեխնիկական բնութագրին ներկայացվող պահանջները

- ա) 2018 թվականի հունվարի 1-ից պետք է տրամադրվեն սենքի տեղային տաքացուցիչների հետեւյալ տեխնիկական բնութագրերը՝
 - i) տեղադրողների եւ վերջնական սպառողների համար նախատեսված ցուցումների ձեռնարկներում, ինչպես նաեւ արտադրողների, նրանց լիազորված ներկայացուցիչների եւ ներմուծողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերում պետք է ներառվեն հետեւյալ տարրերը՝
 - 1) գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում՝ III հավելվածին համապատասխան չափված եւ հաշվարկված տեխնիկական պարամետրերի հետ միասին 1-ին աղյուսակում ներկայացված տեղեկատվությունը, որը ցույց է տալիս աղյուսակում նշված կարելու թվերը,
 - 2) սենքի տեղային էլեկտրական տաքացուցիչների դեպքում՝ III հավելվածին համապատասխան չափված եւ հաշվարկված տեխնիկական պարամետրերի հետ միասին 2-ին աղյուսակում ներկայացված տեղեկատվությունը, որը ցույց է տալիս աղյուսակում նշված կարելու արժեքները,

- 3) առեւտրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում՝ III հավելվածին համապատասխան չափված եւ հաշվարկված տեխնիկական պարամետրերի հետ միասին 3-րդ աղյուսակում ներկայացված տեղեկատվությունը, որը ցույց է տալիս աղյուսակում նշված կարեւոր արժեքները,
 - 4) ցանկացած հատուկ նախազգուշական միջոց, որը պետք է ձեռնարկել տեղային տաքացուցչի հավաքման, տեղադրման կամ այն սարքին վիճակում պահելու ժամանակ.
 - 5) շահագործման ժամկետի ավարտից հետո քանդման, վերամշակման եւ (կամ) դուրսգրման մասին տեղեկություններ:
- ii) 4-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխանության գնահատման նպատակով տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն հետեւյալ տարրերը՝
- 1) «ա» կետում նշված տարրերը,
 - 2) կիրառելիության դեպքում համապատասխան մոդելների ցանկը:
- բ) 2018 թվականի հունվարի 1-ից պետք է տրամադրվի սենքի տեղային տաքացուցիչների հետեւյալ տեխնիկական բնութագրերը՝
- i) միայն ծխանցք չունեցող սենքի տեղային տաքացուցիչների եւ դեպի ծխնելույզ բաց մուտքով սենքի տեղային տաքացուցիչների դեպքում՝ վերջնական սպառողների համար նախատեսված ցուցումների ձեռնարկը, արտադրողների ազատ հասանելիություն ունեցող կայքերը եւ արտադրանքի փաթեթվածքը պետք է ներառեն հետեւյալ նախադասությունն այնպես, որ ապահովվեն տեսանելիությունը եւ ընթեռնելիությունը, ինչպես նաեւ այնպիսի

լեզվով, որը հեշտությամբ կընկալվի այն անդամ պետությունների վերջնական սպառողների կողմից, որտեղ արտադրանքը շուկայահանվել է. «Այս արտադրանքը պիտանի չէ առաջնային ջեռուցման նպատակներով կիրառման համար».

- 1) վերջնական սպառողների համար նախատեսված ցուցումների ձեռնարկում այս նախադասությունը պետք է լինի ձեռնարկի տիտղոսաթերթի վրա.
 - 2) արտադրողների ազատ հասանելիություն ունեցող կայքերի դեպքում այս նախադասությունը պետք է ներկայացված լինի արտադրանքի այլ բնութագրիչների հետ միասին.
 - 3) արտադրանքի փաթեթվածքի դեպքում նախադասությունը պետք է տեղադրված լինի փաթեթվածքի երեւացող հատվածում գնելուց առաջ վերջնական սպառողին ներկայացնելիս.
- ii) միայն սենքի շարժական տեղային էլեկտրական տաքացուցչի դեպքում՝ վերջնական սպառողների համար նախատեսված ցուցումների ձեռնարկը, արտադրողների ազատ հասանելիություն ունեցող կայքերը եւ արտադրանքի փաթեթվածքը պետք է ներառեն հետեւյալ նախադասությունն այնպես, որ ապահովվեն տեսանելիությունը եւ ընթեռնելիությունը, ինչպես նաեւ այնպիսի լեզվով, որը հեշտությամբ կընկալվի այն անդամ պետությունների վերջնական սպառողների կողմից, որտեղ արտադրանքը շուկայահանվել է. «Այս արտադրանքը պիտանի է միայն լավ մեկուսացված տարածքներում կամ հազվադեպ օգտագործման համար».
- 1) վերջնական սպառողների համար նախատեսված ցուցումների ձեռնարկում այս նախադասությունը պետք է լինի ձեռնարկի տիտղոսաթերթի վրա.

- 2) արտադրողների ազատ հասանելիություն ունեցող կայքերի դեպքում այս նախադասությունը պետք է ներկայացված լինի արտադրանքի այլ բնութագրիչների հետ միասին.
- 3) արտադրանքի փաթեթվածքի դեպքում նախադասությունը պետք է տեղադրված լինի փաթեթվածքի երեւացող հատվածում գնելուց առաջ վերջնական սպառողին ներկայացնելիս:

Աղյուսակ 1

Գազային (հեղուկ) վառելիքով աշխատող սենքի տեղային տարացուցիչների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու պահանջները

Մոդելի նույնականացուցիչ (ներ)								
Անուղղակի ջեռուցման ֆունկցիոնալ հնարավորություն՝ [այո/ոչ]								
Ուղղակի ջերմային հզորություն՝ ...(կՎտ)								
Անուղղակի ջերմային հզորություն՝ ...(կՎտ)								
Վառելիք						Տարածքի ջեռուցումից առաջացող արտանետումներ (*)		
						NOx		
Ընտրեք վառելիքի տեսակը				[գազային (հեղուկ)]		[նշել]		[մգ/կՎտ_{նոստրային}] (ԱԶԱ)
Բաղադրիչ	Պայմանա նշան	Արժեք	Միավոր	Բաղադրիչ	Պայմանանշան	Արժեք	Միավոր	
Ջերմային հզորություն				Օգտակար էներգաարդյունավետություն (ԱԶԱ)				
Անվանական ջերմային հզորություն	$P_{անվ}$	x,x	կՎտ	Օգտակար էներգաարդյունավետություն անվանական ջերմարտադրության դեպքում	$\eta_{th,անվ}$	x,x	%	
Նվազագույն ջերմային հզորություն (կողմնորոշիչ)	$P_{նվազ}$	[x,x/առկա է]	կՎտ	Օգտակար էներգաարդյունավետությունը նվազագույն ջերմային հզորության դեպքում (կողմնորոշիչ)	$\eta_{th,նվազ}$	[x,x/առկա է]	%	
Էլեկտրաէներգիայի լրացուցիչ սպառում				Ջերմային հզորության տեսակ (սենյակային ջերմաստիճանի վերահսկում) (ընտրել տարբերակներից որեւէ մեկը)				
Անվանական ջերմային հզորության դեպքում	$e_{տառվ}$	x,xxx	կՎտ	միաֆազ ջերմային հզորություն՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության				[այո/ոչ]
Նվազագույն ջերմային հզորության դեպքում	$e_{նվազ}$	x,xxx	կՎտ	ծեռքով կարգավորվող երկու կամ ավելի ֆազեր՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության				[այո/ոչ]
Սպասման ռեժիմում	$e_{տր}$	x,xxx	կՎտ	մեխանիկական ջերմապահպանիչով սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմ				[այո/ոչ]
				Սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով				[այո/ոչ]
				ավտոմատ միացման օրական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով				[այո/ոչ]
				ավտոմատ միացման շաբաթական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի էլեկտրոնային կարգավորման մեխանիզմով				[այո/ոչ]
				Կառավարման այլ տարբերակներ(հնարավոր է բազմակի ընտրություն)				
				ներկայության դետեկտորով սենյակային				[այո/ոչ]

				ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմ	
				բաց պատուհանի դետեկտորով սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմ	[այո/ոչ]
				հեռակառավարման մեխանիզմով	[այո/ոչ]
				ադապտացիոն գործարկման մեխանիզմով	[այո/ոչ]
				աշխատանքային ժամի սահմանափակմամբ	[այո/ոչ]
				սեւ բալոնի սենսորով	[այո/ոչ]
Մշտական բռնկման բոցի հզորության պահանջարկ					
Բռնկման բոցի հզորության պահանջարկ (եթե կիրառելի է)	$\Phi_{բռնկ.բոց}$	[x,xxx/առկ ա չէ]	կՎտ		
Կոնտակտային տվյալները	Արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը (անվանումը) եւ հասցեն:				
(*) NO _x = ազոտի օքսիդներ					

Աղյուսակ 2

Սենքի տեղային էլեկտրական տաքացուցիչների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու պահանջները

Մոդելի նույնականացուցիչ (ներ)					
Բաղադրիչ	Պայմանանշան	Արժեք	Միավոր	Բաղադրիչ	Միավոր
Ջերմային հզորություն				Մուտքային ջերմության տեսակը՝ միայն սենքի տեղային ջերմակուտակիչ տաքացուցիչների համար (ընտրել տարբերակներից որեւէ մեկը)	
Անվանական ջերմային հզորություն	$P_{անվ.}$	x,x	կՎտ	ջերմության՝ ձեռքով լիցքավորման կարգավորիչ՝ ինտեգրված ջերմապահպանիչով	[այո/ոչ]
Նվազագույն ջերմային հզորություն (կողմնորոշիչ)	$P_{նվազ.}$	[x,x/առկ ա չէ]	կՎտ	ջերմության՝ ձեռքով լիցքավորման կարգավորիչ՝ սենյակի եւ (կամ) դրսի ջերմաստիճանի հետադարձ կապով	[այո/ոչ]
Առավելագույն շարունակական ջերմարտադրություն	$P_{առավ.շար.}$	x,x	կՎտ	ջերմության՝ լիցքավորման էլեկտրոնային կարգավորիչ՝ սենյակի եւ (կամ) դրսի ջերմաստիճանի հետադարձ կապով	[այո/ոչ]
Էլեկտրաէներգիայի լրացուցիչ սպառում				հովհարիչով կարգավորվող ջերմարտադրություն	[այո/ոչ]
Անվանական ջերմարտադրության դեպքում	$e_{առավ.}$	x,xxx	կՎտ	Ջերմային հզորության տեսակ (սենյակային ջերմաստիճանի կարգավորում) (ընտրել տարբերակներից որեւէ մեկը)	
Նվազագույն ջերմային հզորության դեպքում	$e_{նվազ.}$	x,xxx	կՎտ	միաֆազ ջերմարտադրություն՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության	[այո/ոչ]
Սպասման ռեժիմում	$e_{լոն}$	x,xxx	կՎտ	ձեռքով կարգավորվող երկու կամ ավելի ֆազեր՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության	[այո/ոչ]
				մեխանիկական ջերմապահպանիչով սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմով	[այո/ոչ]

	սենյակային ջերմաստիճանի էլեկտրոնային կարգավորմամբ	[այո/ոչ]
	ավտոմատ միացման օրական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի էլեկտրոնային կարգավորման մեխանիզմով	[այո/ոչ]
	ավտոմատ միացման շաբաթական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով	[այո/ոչ]
Կառավարման այլ հնարավորություններ (հնարավոր է բազմակի ընտրություն)		
	ներկայության դետեկտորով սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմ	[այո/ոչ]
	բաց պատուհանի դեպքում սենյակային ջերմաստիճանի կարգավորում	[այո/ոչ]
	հեռակառավարման մեխանիզմով	[այո/ոչ]
	ադապտացիոն գործարկման մեխանիզմով	[այո/ոչ]
	աշխատանքային ժամի սահմանափակմամբ	[այո/ոչ]
	սեւ բալոնի սենսորով	[այո/ոչ]
Կոնտակտային տվյալները	Արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը (անվանումը) եւ հասցեն:	

Աղյուսակ 3

Առևտրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու պահանջները

Մոդելի նույնականացուցիչ (ներ)

Ջեռուցման տեսակը՝ [լուսարձակող/ճառագայթային խողովակ]

Վառելիք	Վառելիք			Տարածքի ջեռուցման արդյունքում առաջացող արտանետումներ (*)
				NOx
Ընտրեք վառելիքի տեսակը	Գազային/ հեղուկ	[նշել]		[մգ/կՎտժ_{ստացային}] (ԱՋԱ)

Բնութագրիչները միայն նախընտրելի վառելիքով աշխատելիս

Բաղադրիչ	Պայմանանշան	Արժեք	Միավոր	Բաղադրիչ	Պայմանանշան	Արժեք	Միավոր
Ջերմային հզորություն				Օգտակար արդյունավետություն (ԱՋԱ)՝ միայն սենքի խողովակավոր տեղային տաքացուցիչները (**)			
Անվանական ջերմային հզորություն	$P_{անվ.}$	x,x	կՎտ	Օգտակար էներգաարդյունավետություն ն անվանական ջերմային հզորության դեպքում	$\eta_{th,անվ.}$	x,x	%

Առավելագույն ջերմային հզորություն	$P_{վազ}$	[x,x/առկա չէ]	կՎտ	Օգտակար էներգաարդյունավետությունը նվազագույն ջերմային հզորության դեպքում	$\eta_{th, նվազ}$	[x,x/առկա չէ]	%
Նվազագույն ջերմային հզորություն (որպես անվանական ջերմային հզորության տոկոս)		[x]	%				
Խողովակային համակարգի անվանական ջերմային հզորություն (կիրառելիության դեպքում)	$P_{համակարգ}$	x,x	կՎտ				
Խողովակային սեզմենտի անվանական ջերմային հզորություն (կիրառելիության դեպքում)	$P_{փաթեթացիոն}$	[x,x/առկա չէ]	կՎտ	Խողովակային սեզմենտի նվազագույն ջերմային հզորության օգտակար արդյունավետություն (կիրառելիության դեպքում)	η_i	[x,x/առկա չէ]	%
(կրկնել բազմաթիվ սեզմենտների համար, կիրառելիության դեպքում)		[x,x/առկա չէ]	կՎտ	(կրկնել բազմաթիվ սեզմենտների համար, կիրառելիության դեպքում)		[x,x/առկա չէ]	%
միանման խողովակային սեզմենտների թիվը	n	[x]	[-]				
Ճառագայթային գործոն				Պատյանի կորուստներ			
ճառագայթային գործոնն անվանական ջերմային հզորության դեպքում	ϵ_{rad}	[x,x]	[-]	Պատյանի մեկուսացման դաս	U		Վտ/(մ ² Կ)
ճառագայթային գործոնը նվազագույն ջերմային հզորության դեպքում	$\epsilon_{rad, նվազ}$	[x,x]	[-]	Պատյանի կորուստի գործոն	$F_{պար}$	[x,x]	%
խողովակային սեզմենտի ճառագայթային գործոնն անվանական ջերմարտադրության դեպքում	$\epsilon_{r,i}$	[x,x]	[-]	Ջեռուցվող տարածքից դուրս տեղադրվելիք ջերմագեներատոր		[այր/ոչ]	
(կրկնել բազմաթիվ սեզմենտների համար, կիրառելիության դեպքում)							
Էլեկտրաէներգիայի լրացուցիչ սպառում				Ջերմարտադրությունը հսկելու տեսակը (ընտրել մեկը)			
Անվանական ջերմային հզորության դեպքում	$e_{առավ}$	x,xxx	կՎտ	— միաֆազ		[այր/ոչ]	
Նվազագույն ջերմային հզորության դեպքում	$e_{նվազ}$	x,xxx	կՎտ	— երկֆազ		[այր/ոչ]	
Սպասման ռեժիմում	$e_{սր}$	x,xxx	կՎտ	— մոդուլյացիա		[այր/ոչ]	
Մշտական բռնկման բոցի հզորության պահանջարկ							
Բռնկման բոցի հզորության պահանջարկ (եթե կիրառելի է)	$\Phi_{բռնկ, բոց}$	[x,xxx/առկա չէ]	կՎտ				
Կոնտակտային տվյալները	Արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը (անվանումը) եւ հասցեն:						

(*) NO_x = ազոտի օքսիդներ:

(**) Սենքի լուսարձակող տեղային տաքացուցիչների համար չափված ջերմային արդյունավետությունը սովորաբար 85,6 % է:

*ՀԱՎԵԼՎԱԾ III***Չափումները եւ հաշվարկները**

1. Սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու եւ ստուգելու նպատակներով չափումներն ու հաշվարկներն իրականացվում են՝ օգտագործելով ներդաշնակեցված չափանիշներ, որոնց հղումային համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*, կամ օգտագործելով այլ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդներ, որոնց հիմքում ընկած են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդները: Դրանք պետք է բավարարեն 2-5-րդ կետերով սահմանված պահանջները:

2. Չափումների եւ հաշվարկների ընդհանուր պայմանները

ա) Անվանական ջերմարտադրության եւ տարածքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության հայտարարված արժեքները կլորացվում են դեպի ամենամոտ տասնորդական նիշը:

բ) Արտանետումների հայտարարված արժեքները կլորացվում են մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:

3. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության ընդհանուր պայմանները

ա) Սենքի սեզոնային տաքացման էներգաարդյունավետությունը ($\eta_{s, on}$) հաշվարկվում է որպես ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետություն ($\eta_{s, on}$)՝ շտկված լրասնուցմամբ, որով պայմանավորվում են ջերմության կուտակման եւ ջերմարտադրության կարգավորումը, լրացուցիչ էլեկտրաէներգիայի սպառումը եւ մշտական բռնկման բոցի էներգասպառումը:

- բ) էլեկտրասպառումը կրկնապատկվում է 2,5 փոխակերպման գործակցով(ՓԳ):

4. Արտանետումների ընդհանուր պայմանները

- ա) Գազային եւ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում իրականացվող չափման ժամանակ հաշվի են առնվում ազոտի օքսիդների արտանետումները (NO_x): Ազոտի օքսիդների արտանետումները հաշվարկվում են ազոտի մոնօքսիդի եւ ազոտի երկօքսիդի գումարով եւ արտահայտվում են ազոտի երկօքսիդով:

5. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության հատուկ պայմանները

- ա) Բացառությամբ առետրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների՝ սենքի բոլոր տեղային տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը սահմանվում է որպես՝

$$\eta U_s = \eta_{SU,on} - 10 \% + F(1) + F(2) + F(3) - F(4) - F(5)$$

Առետրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը սահմանվում է որպես՝

$$\eta_u = \eta_{u,on} - F(1) - F(4) - F(5)$$

որտեղ՝

- դս,օո-ն ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության գործակիցն է, որն արտահայտված է %-ով եւ հաշվարկվում է այնպես, ինչպես սահմանված է 5(բ) կետում.
- F(1)-ը տոկոսով արտահայտված ճշգրտման գործակիցն է, որով պայմանավորվում է սենքի տեղային ջերմակուտակիչ էլեկտրական տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մասով դրական ներդրումը՝ ջերմակուտակման եւ ջերմարտադրության տարբերակների համար ճշգրտված ներդրումների արդյունքում, ինչպես նաեւ առեւտրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների համար սենքի սեզոնային ջեռուցման արդյունավետության մասով բացասական ներդրումը՝ ջերմարտադրության տարբերակների մասով ճշգրտված ներդրումների արդյունքում.
- F(2)-ը տոկոսներով արտահայտված ճշգրտման գործակիցն է, որով պայմանավորվում է սենյակային ջերմաստիճանների հարմարավետության կարգավորման մեխանիզմների մասով ճշգրտված ներդրումների արդյունքում տարածքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մեջ դրական ներդրումը, որի արժեքները անհամատեղելի են եւ չեն կարող գումարվել իրար.
- F(3)-ը տոկոսներով արտահայտված ճշգրտման գործակիցն է, որով պայմանավորվում է սենյակային ջերմաստիճանների հարմարավետության կարգավորման մեխանիզմների մասով ճշգրտված ներդրումների արդյունքում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մեջ դրական ներդրումը, որի արժեքները չեն կարող գումարվել իրար.

- F(4)-ը տոկոսներով արտահայտված ճշգրտման գործակիցն է, որը պայմանավորում է սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մասով բացասական ներդրումը՝ լրացուցիչ էլեկտրաէներգիայի սպառման պատճառով.
- F(5)-ը տոկոսներով արտահայտված ճշգրտման գործակիցն է, որը պայմանավորում է սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մասով բացասական ներդրումը՝ մշտական բռնկման բոցի էներգասպառման պատճառով:

բ) Ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը հաշվարկվում է որպես՝

բացառությամբ սենքի տեղային էլեկտրական տաքացուցիչների եւ առետրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների՝ սենքի բոլոր տեղային տաքացուցիչների դեպքում՝

$$\eta_{s,on} = \eta_{th,w\acute{u}l}.$$

որտեղ՝

- $\eta_{th,w\acute{u}l}$ -ն օգտակար էներգաարդյունավետությունն է անվանական ջերմային հզորության դեպքում՝ հիմնված ՍՋԱ-ի վրա:

Սենքի տեղային էլեկտրական տաքացուցիչների դեպքում՝

$$\eta_{U,on} = \frac{1}{CC} \eta_{th,on}$$

որտեղ՝

- $\Phi\Phi$ -ն առաջնային էներգիայի «փոխակերպման գործակցի» էլեկտրականությունն է.

- $\eta_{th,on}$ -ը սենքի էլեկտրական տեղային տաքացուցիչների համար 100 % է:

Առետրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում՝

$$\eta_{U,on} = \eta_{\gamma,th} \eta_{U,\delta\varphi}$$

որտեղ՝

- $\eta_{U,th}$ -ը չափված ջերմային արդյունավետությունն է՝ տոկոսով արտահայտված.
- $\eta_{U,\delta\varphi}$ -ն արտանետումների արդյունավետությունն է՝ տոկոսով արտահայտված.

Սենքի լուսարձակող տեղային տաքացուցիչների դեպքում $\eta_{U,th}$ -ն 85,6 % է:

Սենքի խողովակավոր տեղային տաքացուցիչների համար՝

$$\eta_{U,th} = (0,15 \eta_{th,անվ.} + 0,85 \eta_{th,նվազ.}) - F_{պայտ.}$$

որտեղ՝

- $\eta_{th,անվ.}$ -ը տոկոսով արտահայտված արդյունավետ հզորությունն է անվանական ջերմային հզորության դեպքում՝ հիմնված ԱՋԱ-ի վրա.
- $\eta_{th,նվազ.}$ -ը տոկոսով արտահայտված արդյունավետ հզորությունն է նվազագույն ջերմարտադրության դեպքում՝ հիմնված ԱՋԱ-ի վրա.
- $F_{պայտ.}$ -ը ջերմագեներատորի պատյանի կորուստներն են՝ արտահայտված տոկոսով:

Եթե արտադրողի կամ մատակարարի կողմից նշված է, որ սենքի խողովակավոր տեղային տաքացուցչի ջերմագեներատորը պետք է տեղադրված լինի ջեռուցվող փակ տարածքում, ապա պատյանի կորուստները 0 (զրոյական) են:

Եթե արտադրողի կամ մատակարարի կողմից նշված է, որ սենքի խողովակավոր տեղային տաքացուցչի ջերմագեներատորը պետք է տեղադրված լինի ջեռուցվող տարածքից դուրս, ապա պատյանի կորստի գործոնը պայմանավորված է ջերմագեներատորի պատյանի ջերմահաղորդականությամբ՝ 4-րդ աղյուսակի համաձայն:

Աղյուսակ 4

Ջերմագեներատորի պատյանի կորստի գործոնը

Պատյանի ջերմահաղորդականություն (U)	
$U \leq 0,5$	2,2 %
$0,5 < U \leq 1,0$	2,4 %
$1,0 < U \leq 1,4$	3,2 %
$1,4 < U \leq 2,0$	3,6 %
$U > 2,0$	6,0 %

Առետրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների արտանետումների արդյունավետությունը հաշվարկվում է հետևյալ եղանակով՝

$$\eta_{s,\Delta\vartheta} = \frac{(0.94 \cdot \Delta\vartheta_U) + 0.19}{(0.46 \cdot \Delta\vartheta_U) + 0.45}$$

որտեղ՝

— $\Delta\vartheta_U$ -ն առետրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների ճառագայթային գործոնն է՝ արտահայտված տոկոսով:

Բոլոր առեւտրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տրաքացուցիչների դեպքում՝ բացառությամբ խողովակավոր համակարգերի՝

$$\Delta Q_U = 0.15 \cdot \Delta Q_{անվ.} + 0.85 \cdot \Delta Q_{սվազ.}$$

որտեղ՝

- $\Delta Q_{անվ.}$ -ն անվանական ջերմային հզորության դեպքում ճառագայթային գործոնն է՝ արտահայտված տոկոսով.
- $\Delta Q_{սվազ.}$ -ը նվազագույն ջերմային հզորության դեպքում ճառագայթային գործոնն է՝ արտահայտված տոկոսով:

խողովակային համակարգերի դեպքում՝

$$\Delta Q_U = \sum_{i=1}^n (0.15 \cdot \Delta Q_{անվ.,i} + 0.85 \cdot \Delta Q_{սվազ.,i}) \cdot \frac{P_{տրաքացուցիչ,i}}{P_{համակարգ}}$$

որտեղ՝

- $\Delta Q_{անվ.,i}$ -ն անվանական ջերմային հզորության դեպքում յուրաքանչյուր խողովակային սեգմենտի հաշվով ճառագայթային գործոնն է՝ արտահայտված տոկոսով.
- $\Delta Q_{սվազ.,i}$ -ը նվազագույն ջերմային հզորության դեպքում յուրաքանչյուր խողովակային սեգմենտի հաշվով ճառագայթային գործոնն է՝ արտահայտված տոկոսով.
- $P_{տրաքացուցիչ,i}$ -ը յուրաքանչյուր խողովակային սեգմենտի ջերմարտադրությունն է՝ արտահայտված կՎտ-ով եւ հիմնված ԱՋԱ-ի վրա.
- $P_{համակարգ}$ -ն ամբողջ խողովակային համակարգի ջերմարտադրությունն է՝ արտահայտված կՎտ-ով եւ հիմնված ԱՋԱ-ի վրա:

Վերը նշված հավասարումը կիրառվում է միայն այն դեպքում, երբ խողովակային համակարգում կիրառված այրիչի, խողովակային սեգմենտի եւ անդրադարձիչների կառուցվածքը նման է սենքի միախողովակավոր տեղային տաքացուցչի կառուցվածքին, իսկ խողովակային սեգմենտի արդյունավետությունը որոշող կարգավորումները նման են սենքի միախողովակավոր տեղային տաքացուցչի կարգավորումներին:

- գ) F(1) ճշգրտման գործակիցը, որով պայմանավորվում է սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մասով դրական ներդրումը՝ մուտքային եւ ելքային ջերմության կարգավորման մասով ճշգրտված ներդրումների արդյունքում, ինչպես նաեւ այն դեպքում, երբ ջերմությունը բաշխվում է բնական կամ հովհարիչով կարգավորվող կոնվեկցիայով սենքի տեղային ջերմակուտակիչ տաքացուցչի համար, եւ պայմանավորվում է բացասական ներդրումը՝ առետրային նպատակներով օգտագործվող սենքի այն տեղային տաքացուցիչների համար, որոնք առնչվում են դրա ջերմարտադրությունը կարգավորող արտադրանքի հնարավորությունների հետ:

Սենքի տեղային ջերմակուտակիչ տաքացուցիչների դեպքում ջերմարտադրության F(1) ճշգրտման գործակիցը հաշվարկվում է հետևյալ եղանակով՝

Եթե արտադրանքը սարքավորված է 5-րդ աղյուսակում նշված մեխանիզմներից որեւէ մեկով (փոխադարձ բացառող), ապա F(1) ճշգրտման գործակիցը պետք է մեծացվի ըստ այդ տարբերակի համապատասխան արժեքի:

Աղյուսակ 5

F(1) ճշգրտման գործակիցը սենքի տեղային ջերմակուտակիչ տաքացուցչի դեպքում

Եթե արտադրանքը սարքավորված է հետեյալ մեխանիզմներով (կարող է կիրառվել միայն մեկ տարբերակ)	F(1)-ը մեծացված է
Ջերմության՝ ձեռքով լիցքավորման կարգավորիչ՝ ինտեգրված ջերմապահպանիչով	0,0 %
Ջերմության՝ ձեռքով լիցքավորման կարգավորիչ՝ սենյակի եւ (կամ) դրսի ջերմաստիճանի հետադարձ կապով	2,0 %
Ջերմության լիցքավորման էլեկտրոնային կարգավորիչ՝ սենյակի եւ (կամ) դրսի ջերմաստիճանի հետադարձ կապով կամ էներգիա մատակարարողի կողմից հսկողությամբ	3,5 %

Եթե սենքի տեղային ջերմակուտակիչ տաքացուցչի ջերմարտադրությունն առաջանում է հովհարիչի միջոցով, ապա հավելյալ 1,5 % պետք է գումարվի F(1)-ին:

Առետրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում ճշգրտման գործակիցը հաշվարկվում է հետեյալ կերպ՝

Աղյուսակ 6

F(1) ճշգրտման գործակիցը՝ առետրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների համար

Եթե արտադրանքի ջերմարտադրությունը հսկելու տեսակը հետեյալն է՝	F(1)-ը հաշվարկվում է հետեյալ եղանակով՝
Միաֆազ	$F(1) = 5 \%$
Երկֆազ	$F(1) = 5\% - \left(2.5\% \cdot \frac{P_{անվ.} - P_{նվազ.}}{30\% \cdot P_{անվ.}} \right)$
Մոդուլյացիա	$F(1) = 5\% - \left(5.0\% \cdot \frac{P_{անվ.} - P_{նվազ.}}{40\% \cdot P_{անվ.}} \right)$

հնարավորության						
Ձեռքով կարգավորվող երկու կամ ավելի ֆազեր՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմի	1,0 %	0,0 %	0,0 %	0,0 %	2,0 %	1,0 %
Մեխանիկական ջերմապահպանիչով սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմով	6,0 %	1,0 %	0,5 %	1,0 %	1,0 %	2,0 %
Սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով	7,0 %	3,0 %	1,5 %	3,0 %	2,0 %	4,0 %
Ավտոմատ միացման օրական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով	8,0 %	5,0 %	2,5 %	5,0 %	3,0 %	6,0 %
Ավտոմատ միացման շաբաթական ժամակարգավորիչ ունեցող՝ սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով	9,0 %	7,0 %	3,5 %	7,0 %	4,0 %	7,0 %

F(2) ճշգրտման գործակիցը չի կիրառվում առետրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում:

- ե) F(3) ճշգրտման գործակիցը, որով պայմանավորվում է սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մասով դրական ներդրումը սենյակի ջերմային հարմարավետության վերահսկողության համապատասխան ներդրումների արդյունքում, որոնց արժեքները կարող են գումարվել, հաշվարկվում է հետևյալ կերպ՝

Սենքի բոլոր տեղային տաքացուցիչների դեպքում ճշգրտման F(3) գործակիցը 8-րդ աղյուսակին համապատասխան արժեքների հանրագումարն է, որով պայմանավորված՝ կիրառվում է (կիրառվում են) կարգավորման բնութագիրը (բնութագրերը):

Աղյուսակ 8

F(3) ճշգրտման գործակիցը

Եթե արտադրանքը սարքավորված է հետեւյալ մեխանիզմներով (կարող են կիրառվել մի քանի տարբերակներ)	F(3)					
	Էլեկտրական տեղային տաքացուցիչների համար					գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում
	Շարժական	Ոչ շարժական	Ջերմակուտակիչ	Ստորգետնյա	Ճառագայթային	
Ներկայության դետեկտորով սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմով	1,0 %	0,0 %	0,0 %	0,0 %	2,0 %	1,0 %
Բաց պատուհանի դեպքում սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիզմով	0,0 %	1,0 %	0,5 %	1,0 %	1,0 %	1,0 %
Հեռակառավարման մեխանիզմով	0,0 %	1,0 %	0,5 %	1,0 %	1,0 %	1,0 %
Ադապտացիոն գործարկման մեխանիզմով	0,0 %	1,0 %	0,5 %	1,0 %	0,0 %	0,0 %
Աշխատանքային ժամի սահմանափակմամբ	0,0 %	0,0 %	0,0 %	0,0 %	1,0 %	0,0 %
Սեւ բալոնի սենսորով	0,0 %	0,0 %	0,0 %	0,0 %	1,0 %	0,0 %

զ) Լրացուցիչ էլեկտրաէներգիայի սպառման F(4) ճշգրտման գործակիցը հաշվարկվում է հետեւյալ եղանակով՝

Ճշգրտման այս գործակցի դեպքում հաշվի է առնվում էլեկտրաէներգիայի լրացուցիչ սպառումը «միացված» եւ «սպասման» ռեժիմներում:

Սենքի տեղային էլեկտրական տաքացուցիչների դեպքում ճշգրտման գործակիցը հաշվարկվում է հետեւյալ եղանակով՝

Լրացուցիչ էլեկտրաէներգիայի սպառման ճշգրտման F(4) գործակիցը հաշվարկվում է հետեւյալ եղանակով՝

$$F(4) = CC \cdot \frac{a \cdot e_{\text{էլ}}}{P_{\text{սնվ}}} \cdot 100[\%]$$

որտեղ՝

- $el_{տն}$ -ը սպասման ռեժիմում էլեկտրականության սպառումն է՝ արտահայտված կՎտ-ով.
- $P_{անվ.}$ -ն արտադրանքի անվանական ջերմային հզորությունն է՝ արտահայտված կՎտ-ով.
- a-ն գործակից է, որով հաշվի է առնվում, թե արդյոք արտադրանքը համապատասխանում է Հանձնաժողովի թիվ 1275/2008¹ կանոնակարգին (ԵՀ)¹
 - եթե արտադրանքը համապատասխանում է թիվ 1275/2008 կանոնակարգով (ԵՀ) սահմանված սահմանափակ արժեքներին, a-ն, որպես կանոն, 0- (զրո) է.
 - եթե արտադրանքը չի համապատասխանում թիվ 1275/2008 կանոնակարգով (ԵՀ) սահմանված սահմանափակ արժեքներին, a-ն, որպես կանոն, 1,3-է:

Գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում լրացուցիչ էլեկտրաէներգիայի սպառման ճշգրտման գործակիցը հաշվարկվում է հետևյալ եղանակով՝

$$F(4) = CC \cdot \frac{0.2 \cdot el_{տառվ.} + 0.8 \cdot el_{սվառվ.} + 1.3 \cdot el_{տն}}{P_{անվ.}} \cdot 100[\%]$$

որտեղ՝

- $el_{տառվ.}$ -ն էլեկտրաէներգիայի սպառումն է անվանական ջերմային հզորության դեպքում՝ արտահայտված կՎտ-ով.

¹ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող՝ էլեկտրական և էլեկտրոնային կենցաղային և գրասենյակային սարքավորումների՝ սպառման ու անջատված ռեժիմներում էլեկտրականության սպառման էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին Հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1275/2008 կանոնակարգ (ԵՀ) (ՊՏ թիվ L 339, 18.12.2008թ., էջ 45):

- $el_{սվազ.ն}$ էլեկտրաէներգիայի սպառումն է նվազագույն ջերմային հզորության դեպքում՝ արտահայտված ԿՎ-ով: Այն դեպքում, երբ արտադրանքի նվազագույն ջերմային հզորություն նախատեսված չէ, օգտագործվում է անվանական ջերմային հզորության դեպքում էլեկտրաէներգիայի սպառման արժեքը.
- $el_{տ-ը}$ «սպասման» ռեժիմում արտադրանքի էլեկտրաէներգիայի սպառումն է՝ արտահայտված կՎ-ով.
- $P_{անվ.ն}$ արտադրանքի անվանական ջերմային հզորությունն է՝ արտահայտված կՎտ-ով:

Առետրային նպատակներով օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում լրացուցիչ էլեկտրաէներգիայի սպառման ճշգրտման գործակիցը հաշվարկվում է հետևյալ եղանակով՝

$$F(4) = CC \cdot \frac{0.15 \cdot el_{առաւ} + 0.85 \cdot el_{սվազ.ն} + 1.3 \cdot el_{sb}}{P_{անվ.ն}} \cdot 100[\%]$$

- է) Մշտական բռնկման բոցի էներգասպառման հետ կապված ճշգրտման $F(5)$ գործոնը հաշվարկվում է հետևյալ եղանակով՝

Այս ճշգրտման գործակցում հաշվի են առնվում մշտական բռնկման բոցի հզորության հետ կապված պահանջարկը:

Գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում այն հաշվարկվում է հետևյալ եղանակով՝

$$F(5) = 0.5 \cdot \frac{P_{բռնկ.բոց}}{P_{անվ.ն}} \cdot 100[\%]$$

որտեղ՝

- $P_{բռնկ.բոց}$ -ը բռնկման բոցի սպառումն է՝ արտահայտված կՎտ-ով.

- $P_{անվ.}$ -ն արտադրանքի անվանական ջերմային հզորությունն է՝ արտահայտված կՎտ-ով:

Առետրային նպատակներով օգտագործվող սենքի բոլոր տեղային տաքացուցիչների դեպքում ճշգրտման գործակիցը հաշվարկվում է հետևյալ եղանակով՝

$$F(5) = 4 \cdot \frac{P_{բնկ,բոց}}{P_{անվ.}} \cdot 100[\%]$$

Եթե արտադրանքը չունի մշտական ազդանշանային լամպ (բոց), ապա $P_{բնկ,բոց}$ -ը 0 (զրո) է:

Որտեղ՝

- $P_{բնկ,բոց}$ -ը բռնկման բոցի սպառումն է՝ արտահայտված կՎտ-ով.
- $P_{անվ.}$ -ն արտադրանքի անվանական ջերմային հզորությունն է՝ արտահայտված կՎտ-ով:

*ՀԱՎԵԼՎԱԾ IV***Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող
ստուգման ընթացակարգը**

2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված՝ շուկայի վերահսկողության նպատակով ստուգումներ իրականացնելիս անդամ պետությունների մարմինները II հավելվածով սահմանված պահանջները բավարարելու նպատակով կիրառում են ստուգման հետեւյալ ընթացակարգը՝

1. Անդամ պետությունների մարմինները յուրաքանչյուր մոդելի դեպքում իրականացնում են մեկ միավորի փորձարկում:
2. Մոդելը համարվում է սույն կանոնակարգի II հավելվածով սահմանված կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝
 - ա) հայտարարված արժեքները համապատասխանում են II հավելվածով սահմանված պահանջներին.
 - բ) սենքի տեղային էլեկտրական տաքացուցիչների դեպքում սենքի սեզոնային ջեռուցման դս էներգաարդյունավետությունը չի կարող ավելի ցածր լինել, քան միավորի անվանական ջերմարտադրության դեպքում հայտարարված արժեքը.
 - գ) հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում սենքի սեզոնային ջեռուցման դս էներգաարդյունավետությունը հայտարարված արժեքից ավելի ցածր չէ, քան 8 %-ով.
 - դ) գազային վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում սենքի սեզոնային ջեռուցման դս էներգաարդյունավետությունը հայտարարված արժեքից ավելի ցածր չէ, քան 8 %-ով.
 - ե) գազային եւ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում NO_x-ի արտանետումները հայտարարված արժեքից ավելի բարձր չեն, քան 10%-ով.

- զ) սենքի լուսարձակող տեղային տաքացուցիչների եւ սենքի խողովակավոր տեղային տաքացուցիչների դեպքում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը հայտարարված արժեքից ավելի ցածր չէ, քան 10 %-ով.
- է) սենքի լուսարձակող տեղային տաքացուցիչների եւ սենքի խողովակավոր տեղային տաքացուցիչների դեպքում NO_x-ի արտանետումները հայտարարված արժեքից ավելի բարձր չեն, քան 10%-ով.
3. Եթե 2(ա) եւ 2(բ) կետերում նշված արդյունքը չի ապահովվում, ապա մոդելը եւ բոլոր համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգին չհամապատասխանող: Եթե 2(զ)-2(թ) կետերում նշված արդյունքներից որեւէ մեկը չի ապահովվում, ապա անդամ պետությունների մարմինները փորձարկման համար պատահականության սկզբունքով ընտրում են նույն մոդելի երեք լրացուցիչ միավոր: Որպես այլընտրանք, ընտրված երեք լրացուցիչ միավորը կարող է ընտրվել մեկ կամ ավելի համարժեք մոդելներից, որոնք արտադրողի տեխնիկական փաստաթղթերում թվարկվել են որպես համարժեք արտադրանք:
4. Մոդելը համարվում է սույն կանոնակարգի II հավելվածով սահմանված կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝
- ա) հայտարարված արժեքները համապատասխանում են II հավելվածում սահմանված պահանջներին.
- բ) հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում երեք լրացուցիչ միավորի՝ սենքի սեզոնային ջեռուցման դս միջին էներգաարդյունավետությունը հայտարարված արժեքից ավելի ցածր չէ, քան 8%-ով.
- զ) գազային վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում երեք լրացուցիչ միավորի՝ սենքի սեզոնային ջեռուցման դս միջին էներգաարդյունավետությունը հայտարարված արժեքից ավելի ցածր չէ, քան 8%-ով.

- դ) գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների դեպքում երեք լրացուցիչ միավորի՝ NO_x-ի միջին արտանետումները հայտարարված արժեքից ավելի բարձր չեն, քան 10%-ով.
- ե) սենքի լուսարձակող տեղային տաքացուցիչների եւ սենքի խողովակավոր տեղային տաքացուցիչների դեպքում երեք լրացուցիչ միավորի՝ սենքի սեզոնային ջեռուցման միջին էներգաարդյունավետությունը հայտարարված արժեքից ավելի ցածր չէ, քան 10 %-ով.
- զ) սենքի լուսարձակող տեղային տաքացուցիչների եւ սենքի խողովակավոր տեղային տաքացուցիչների դեպքում երեք լրացուցիչ միավորի՝ NO_x-ի միջին արտանետումները հայտարարված արժեքից ավելի բարձր չեն, քան 10%-ով:
5. Եթե 4-րդ կետում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա մոդելը համարվում է սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող:
- Անդամ պետությունների մարմինները մոդելի անհամապատասխանության վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, փորձարկման արդյունքները եւ այլ համապատասխան տեղեկատվություն են տրամադրում այլ անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին:
6. Անդամ պետությունների մարմիններն օգտագործում են III հավելվածով սահմանված չափման եւ հաշվարկման մեթոդները:
- Սույն հավելվածով սահմանված փորձարկման առավելագույն թույլատրելի շեղումները վերաբերում են միայն անդամ պետությունների մարմինների կողմից չափված պարամետրերի փորձարկմանը եւ մատակարարի կողմից որպես թույլատրելի շեղում չեն օգտագործվում տեխնիկական փաստաթղթերում արժեքներ սահմանելու նպատակով:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ V***6-րդ հոդվածում նշված կողմնորոշիչ հենանիշերը**

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության եւ ազոտի օքսիդների արտանետումների մասով սենքի տեղային տաքացուցիչների համար շուկայում հասանելի լավագույն տեխնոլոգիաները սահմանվում են հետեւյալ եղանակով՝

1. Հատուկ հենանիշեր՝ սենքի տեղային տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության համար
 - ա) հենանիշ՝ գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության համար՝ 65 %,
 - բ) հենանիշ՝ գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության համար՝ 88 %,
 - գ) հենանիշ՝ սենքի տեղային էլեկտրական տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության համար՝ 39%-ից բարձր,
 - դ) հենանիշ՝ սենքի լուսարձակող տեղային տաքացուցիչների՝ սենքի սեզոնային տաքացման էներգաարդյունավետության համար՝ 92 %,
 - ե) հենանիշ՝ սենքի խողովակավոր տեղային տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության համար՝ 88 %.
2. Հատուկ հենանիշեր՝ սենքի տեղային տաքացուցիչների՝ ազոտի օքսիդների (NO_x) արտանետումների համար
 - ա) հենանիշեր՝ գազային կամ հեղուկ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչների՝ NO_x-ի արտանետումների համար՝ 50 մգ/կՎտժ մուտքային՝ ԱՋԱ-ի հիման վրա.

բ) հենանիշեր՝ սենքի լուսարձակող տեղային տաքացուցիչների եւ սենքի խողովակավոր տեղային տաքացուցիչների՝ NO_x-ի արտանետումների համար՝ 50 մգ/կՎտժ մոտքային՝ ԱԶԱ-ի հիման վրա.

1-ին եւ 2-րդ կետերում նշված հենանիշերը պարտադիր կերպով չեն ենթադրում, որ այդ արժեքների համակցությունը հասանելի է միայն մեկ սենքի տեղային տաքացուցչի համար:
